# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 դեկտեմբերի 2016 թվականի N 46-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 14 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու թիվ 14 նիստի օրակարգը:

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին:
2. 2017 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը սահմանելու մասին:
3. 2017 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքում տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափեր սահմանելու մասին:
4. 2017 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
5. 2017 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:

6. 2017 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

7. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՆԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 դեկտեմբերի 2016 թվականի N 47-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու 2013 թվականի փետրվարի 14-ի «Գետամեջ համայնքի 2014-2018 թվականների զարգացման քառամյա ծրագիրը հաստատելու մասին» N 9-Ն որոշումը:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՆԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված
Գեղամեջ համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 19-ի
N 47-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ
# 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**Մշակվել է՝** համայնքի ղեկավարին կից գործող «համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի» կողմից
**Ներկայացվել է՝** համայնքի ղեկավար Ավետիս Մուրադյանի կողմից

ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔ 2016Թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ……………………………………………………..2
2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ……………………………………………………..4
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ…………..18
4. ՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ……………………………………………………………………….25
5. ՀԶԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ…………………………………………………………………………….27
6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ………………………………………………………………………………………..29

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2017-2021թթ. Զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Կոտայքի մարզպետի կողմից ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Գետամեջ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ արտադրական կազմակերպությունների, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի և Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 11-ի N 26-Ա որոշմամբ ստեղծված համայնքի ղեկավարին կից գործող «համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի» (ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ում ներառված են Գետամեջ համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ: ՀԶԾ-ն ներառում է նաև Գետամեջ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Գետամեջ համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, համայնքի

բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:
ԽՄ-ը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

# 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## 2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի մասին առաջին գրավոր հիշատակությունը պատմական աղբյուրներում թվագրվում է 1699 թվականով: Համայնքը նախկինում կոչվել է Կենտրոն, Կեդրան, Քիթիրան, Քեթրան և այլ անուններով, որոնք բոլորն էլ ծագել են Կենտրոն բառից:

Համայնքի բնակչության հիմնական մասի արմատները արևմտյան Հայաստանից են՝ Մուշ, Վան, Բիթլիս:

Համայնքն ունի միջնակարգ դպրոց, մշակույթի տուն (չի գործում), գրադարան, բուժակ-մանկաբարձական կետ (ԲՄԿ):

Գետամեջ համայնքը գտնվում է նախալեռնային գոտում, ծովի մակերևույթից 1250 մետր միջին բարձրության վրա: Հեռավորությունը Երևան քաղաքից՝ 15 կիլոմետր, մարզկենտրոնից՝ 35 կիլոմետր է: Բնակչության թիվը կազմում է 845 մարդ, համայնքի վարչական տարածքը՝ 560,39 հա:

Համայնքում առկա է 200 առանձնատուն՝ 84,72 հեկտար տարածքով և 496 այգետնակ՝ 71,86 հեկտար տարածքով: Կան բազմաթիվ կիսակառույց տներ, որոնք տնտեսական ճգնաժամի պատճառով անգործության են մատնված:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ, որոշ մասը՝ անասնապահությամբ և արտերկրյա աշխատանքներով:

Կլիման մեղմ է, հունվար ամսին միջին ջերմաստիճանը կազմում է -4$^0$C: Ամառը հով է լինում, հուլիս ամսվա միջին ջերմաստիճանը կազմում է +25$^0$C: Համայնքի վարչական տարածքում գտնվող վարելահողերը ոռոգովի չեն և բերքատվությունը մեծ կախում ունի տարվա տեղումներից:

Ձնածածկույթը Գետամեջ համայնքի տարածքում տևական է լինում, ձմռան ամիսներին ճանապարհների որոշակի հատվածներ դառնում են դժվարանցանելի, սակայն համայնքում հաճախակի կատարվող ձյունածածկ ճանապարհների մաքրման աշխատանքների շնորհիվ, ավտոմեքենաների շարժը չի դադարում: Գարնանը տեղում են հորդառատ անձրևներ, կարկուտ, երբեմն կարկուտի պատճառով գյուղացին կորցնում է բերքի մի մասը:

Համայնքի հողերն ըստ նպատակային նշանակության և հողատեսքի ներկայացված է աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1. Համայնքի հողերն ըստ նպատակային նշանակության և հողատեսքի (առ՝ 01.07.2016թ. դրությամբ)**

| Համայնքի հողերն ըստ նպատակային նշանակության և հողատեսքի | Տարածքը՝ (հա) |
|---|---|
| **Համայնքի վարչական տարածքը՝** | **560,33** |
| **գյուղատնտեսական նշանակության հողեր՝** | **275,53** |
| վարելահող՝ | 119,39 |
| արոտ՝ | 9,95 |
| այլ հողատեսքեր՝ | 146,19 |
| **բնակավայրերի նշանակության հողեր՝** | **214,08** |
| բնակելի կառուցապատման՝ | 156,68 |

| | |
|---|---|
| *Այդ թվում* տնամերձ | 84,72 |
| այգեգործական (ամառանոցային)՝ | 71,86 |
| հասարակական կառուցապատման՝ | 6,49 |
| ընդհանուր օգտագործման՝ | 11,87 |
| այլ հողեր՝ | 39,04 |
| **արդյունաբերության, ընդերքօգտագործման նշանակության հողեր՝** | **43,10** |
| արդյունաբերության՝ | 15,1 |
| գյուղատնտեսական՝ | 28,0 |
| **էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նշանակության հողեր՝** | **10,75** |
| էներգետիկայի՝ | 0,91 |
| տրանսպորտի՝ | 9,77 |
| կոմունալ ենթակառուցվածքների՝ | 0,07 |
| **հատուկ պահպանվող տարածքների նշանակության՝** | **4,06** |
| պատմական և մշակութային՝ | 4,06 |
| **ջրային նշանակության՝** | **12,87** |
| գետեր՝ | 6,08 |
| ջրանցքներ՝ | 6,78 |
| հիդրոտեխնիկական և ջրատնտեսական այլ՝ | 0,01 |

Գետամեջ համայնքի բնակչությունը 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 845 մարդ (աղյուսակ 2):

**Աղյուսակ 2. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.01.2016թ. դրությամբ)**

| Հ/Հ | Ցուցանիշները | Մարդ |
|---|---|---|
| 1. | Բնակչության թվաքանակը, մարդ | **845** |
| 2. | Տնային տնտեսությունների թվաքանակը | **200** |
| 3. | Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը | **6** |

Համայնքի բնակչության 49 % կազմում են տղամարդիկ և 51% կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 3-ում:

**Աղյուսակ 3. Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016թ. դրությամբ)**

| Հ/Հ | Ցուցանիշները | Ընդամենը | Կանայք | Տղամարդիկ |
|---|---|---|---|---|
| 1. | Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝ | **845** | **434** | **418** |
| | մինչև 1 տարեկան | **4** | **3** | **1** |
| | 1-2 տարեկան | **12** | **7** | **4** |
| | 3-4 տարեկան | **22** | **14** | **8** |
| | 5-6 տարեկան | **22** | **11** | **11** |
| | 7-10 տարեկան | **52** | **26** | **26** |
| | 11-14 տարեկան | **28** | **8** | **20** |
| | 15-17 տարեկան | **21** | **6** | **15** |
| | 18 և ավելի տարեկան | **684** | **359** | **333** |
| 2. | Կենսաթոշակառուներ, ներառյալ՝ հաշմանդամներ) այդ թվում՝ | **83** | **56** | **27** |
| | Տարիքային և աշխատանքային | **694** | **355** | **339** |
| 3. | Միակողմանի ծնողազուրկ երեխաներ | **2** | **0** | **2** |
| 4. | Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ | **0** | **0** | **0** |
| 5. | Հաշմանդամ երեխաներ | **2** | **2** | **0** |
| 6. | Խնամակալության հանձնված երեխաներ | **0** | **0** | **0** |
| 7. | Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ | **0** | **0** | **0** |
| 8. | Արցախյան պատերազմի մասնակիցներ | **0** | **0** | **0** |
| 9. | Հաշմանդամներ | **3** | **1** | **2** |
| 10. | Զբաղվածներ | **68** | **37** | **31** |
| 11. | Գործազուրկներ | **533** | **266** | **267** |
| 12. | Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը | **8** | | |
| 13. | Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը | **0** | **0** | **0** |

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Աշխատունակ տղամարդկանց զգալի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

## 2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Գետամեջ համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի N 35-Ն որոշմամբ հաստատված 2016 թվականի բյուջեն եկամտային մասով կազմել է **20779.0** հազար դրամ, ծախսերի գծով՝ **20779.0** հազար դրամ, իսկ դեֆիցիտի գծով՝ **0** դրամ: Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 14-ի N 3-Ն որոշմամբ 2016 թվականի բյուջեն (ճշտված բյուջե) եկամտային մասով փոփոխվել է **20779.0** հազար դրամ, ծախսերի գծով՝ **23185.7** հազար դրամ, իսկ դեֆիցիտի գծով՝ **2406.7** հազար դրամ: 2016 թվականի բյուջեի եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է **49,8 %՝ 10346.3** հազար դրամ:

Համայնքում գործում է ոռոգման համակարգ, որը, սակայն, ունի բարձր մաշվածություն, և ամենակարևորը, չի ընդգրկում վարելահողերը:

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ, որոշ մասն էլ անասնապահությամբ: Հավաքված բերքից հիմնականում գերակշռող է ծիրանը և խնձորը, բավարար

բերքատվության առումով՝ դեղձը, բալը, կեռասը, տանձը, սալորը: Համայնքն ունի 119,39 հեկտար վարելահող, որոնց մեծ մասը չի մշակվում անջրդի լինելու պատճառով: Գյուղատնտեսական արտադրանքը հիմնականում իրացվում է Աբովյանի և Երևանի գյումթերքների շուկայում: Համայնքը գյուղատնտեսական մասնագիտական աջակցությունը ստանում է Կոտայքի գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոնի (ԳԱՄԿ) կողմից: Անասնապահությամբ զբաղվող տնտեսություններն արտադրում են կաթ, միս, ձու և մեղր: Խոտի և խտացված կերի անբավարարության պատճառով դժվարանում է անասունների մսուրային շրջանի կազմակերպումը:
Արոտավայրերը մեծամասամբ գտնվում են թեք լանջերի վրա:

Համայնքում գործում է 3 ձեռնարկություն՝

- «Կամուրջշին» ՓԲԸ, որը զբաղվում է կամուրջների կառուցման և վերանորոգման համար անհրաժեշտ երկաթ-բետոնե կոնստրուկցիաների արտադրությամբ և ունի 8 աշխատակից: Ձեռնարկությունը ձմռան ամիսներին ցրտի պատճառով չի գործում.
- «Արծիվ» ՍՊԸ՝ հանդիսանում էր ռեստորանային համալիր, այն ներկայումս չի գործում.
- Թռչնաֆաբրիկա «Գետամեջ-2016» ՍՊԸ՝ նախկինում առավել հայտնի «Գետամեջի թռչնաֆաբրիկա» ՍՊԸ, որը  զբաղվել է թռչնի մսի արտադրությամբ և ներկայումս դեռևս գործունեություն չի ծավալում:

Համայնքում գործում է 1 առևտրի օբյեկտ, որտեղ իրականացվում է ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառք, 1 հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների վաճառքի կետ և 1 հանրային սննդի օբյեկտ:

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, որը կառուցվել է 1978 թվականին :

Դպրոցում սովորում է 73 աշակերտ: Դպրոցական կրթությունը 12 ամյա է, դասավանդում են 22 ուսուցիչներ: Դպրոցում կազմակերպվում են տոնական միջոցառումներ: Անմխիթար վիճակում է գտնվում դպրոցի ջեռուցման համակարգը: Դասարանները ձմռանը ջեռուցվում են փայտյա վառարաններով և  էլեկտրական  ջեռուցիչներով:

Գետամեջ համայնքն ունի մեկ մշակույթի տուն, որը գտնվում է համայնքապետարանի շենքում, սակայն չի գործում և ունի վերանորոգման կարիք: Այն կիսավթարային վիճակում է գտնվում, ինչի հետևանքով համայնքը զրկվել է հասարակական միջոցառումներ, կինո, թատրոն կազմակերպելու հնարավորությունից:

Համայնքապետարանի շենքում է գտնվում նաև գրադարանը, որն ունի 7305 գիրք, այն գտնվում է ոչ բարվոք վիճակում: Ընթերցողների թիվը կազմում է մոտ 145 մարդ, որոնցից մեծամասնությունը դպրոցականներ են: Գրադարանում հաճախակի կազմակերպվում են միջոցառումներ, փոքրահասակ երեխաների համար՝ հեքիաթների ընթերցանություն:

Համայնքապետարանն ունի 8 աշխատակից՝ համայնքի ղեկավար, 1 համայնքի ղեկավարի տեղակալ, 4 համայնքային ծառայող և 2 տեխնիկական սպասարկման աշխատող:

Գետամեջի համայնքապետարանն ունի համացանցային պաշտոնական կայք, որը կառավարում է համայնքապետարանի աշխատակազմը և դրա նպատակն է բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ իրազեկումը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը և բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը: Համայնքապետարանում և համայնքի կենտրոնական հատվածներում տեղադրված են տեղեկատվական ցուցատախտակներ, որով ապահովվում է համայնքի ղեկավարի և ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը:

Գետամեջ համայնքի տարածքում առկա են պատմամշակութային հուշարձաններ: Բարձր է բնակչության դերը համայնքի մշակութային ոլորտում: Համայնքում առկա է 2 պատմության և մշակույթի անշարժ հուշարձան:
Համայնքում կառուցված է Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին հավերժացնող հուշարձան կոթողը: Ամեն տարի մայիսի 9-ին համայնքի ղեկավարի գլխավորությամբ համայնքի բնակիչները իրենց հարգանքի տուրքն են մատուցում զոհված նահատակների հիշատակին:
Համայնքում առկա են պատմամշակութային հուշարձաններ, եկեղեցի և մատուռ: Եկեղեցին կառուցվել է 1316 թվականին:
2015 թվականին համայնքում տեղադրվել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող խաչքար-հուշակոթող:
Համայնքի տարածքում է գտնվում նաև «Թուխ մանուկ» մատուռը:
Համայնքն ունի ԲՈՒՀ-երի ավելի քան 198 շրջանավարտ տարբեր մասնագիտություններով, որոնք կարողանում են օգնել համայնքի կրթության ու դաստիարակության մշակույթին, շինարարական աշխատանքներին:
Աղյուսակ 4-ում ներկայացված է վերը նշված ուսումնական հաստատությունում աշխատողների և սովորող երեխաների վերաբերյալ տեղեկատվություն:

**Աղյուսակ 4. Գետամեջ համայնքի միջնակարգ դպրոցի վերաբերյալ ցուցանիշներ**

| Հ/հ | Հաստատության անվանումը | Աշխատողների թիվը | Սովորողների թիվը |
|---|---|---|---|
| 1. | «Գետամեջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ | **22** | **73** |

## 2.3 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ: Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավմանը զուգահեռ, քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլ պատկանելիության, մասնավոր հատվածի մի շարք կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, ծառայությունների և այլ ոլորտներից), առանց որի անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Գետամեջ համայնքի քաղպաշտպանության շտաբի պետն ի պաշտոնե համարվում է համայնքի ղեկավարը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են քաղպաշտպանության շտաբի առանձին ծառայությունները:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման գործում բնակչության էվակուացման համար մշակված է պլան, համապատասխան որի, բնակելի, հասարակական շենքերի, մյուս շենքերի ու շինությունների համար նախատեսված է հարմարավետ մոտեցումներով աշխատանքների տարման կոմունիկացիոն սխեմաներ:

## 2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԵՅՍՄԻԿ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1351-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների կատարման նպատակով՝ Գետամեջ համայնքի զարգացման հնգամյա ծրագրում ներառել սեյսմիկ ռիսկերի նվազեցման հետևյալ միջոցառումները՝

- Ուսումնասիրել Գետամեջ համայնքի հատուկ կարևորության օբյեկտները՝ համայնքապետարանի վարչական շենք, Գետամեջի միջնակարգ դպրոց, էլեկտրաէներգիայով սնուցող բարձր, միջին և ցածրավոլտ հզորության տրանսֆորմատորային կայաններ, կամուրջներ, արտակարգ իրավիճակների պայմաններում համայնքի կենսագործունեությունն ապահովող «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի տարածքային ծառայություն, վերհանել դրանց սեյսմիկ խոցելիության ռիսկերը՝ հնարավորության դեպքում կիրառելով սեյսմիկ շինարարության նոր մեթոդներ:
- Ստեղծված արագ արձագանքման ուժերի միջոցով մշակել նորմատիվ փաստաթղթեր, որոշել համայնքի բազմաբնակարան շենքի սեյսմիկ խոցելիության աստիճանը՝ ներգրավելով սեյսմոլոգների և երկրաբանների:
- Ուսումնասիրել և վերհանել արտակարգ իրավիճակների ժամանակ ապաստարանների և թաքստոցների առկայությունը, նրանց տեխնիկական վիճակը, անհրաժեշտության դեպքում կազմել դրանց նկարագիրը և ներկայացնել առաջարկություններ՝ հայտնաբերված թերությունների վերացման վերաբերյալ:
- Մշտական ուշադրության կենտրոնում պահել բնակչության իրազեկման և ազդարարման միջոցների սարքին և գործուն վիճակը, համայնքի կազմակերպություններում և բնակչության շրջանում պարբերաբար անցկացնել ուսուցումներ՝ երկրաշարժի և արտակարգ իրավիճակների ժամանակ նրանց ճշգրիտ և արհեստավարժ գործողությունների վերաբերյալ:

## 2.5 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

- Համայնքում ամեն տարի ընդլայնվում է լուսավորության ցանցը: 2012 թվականին համայնքում անցկացվել է լուսավորության ցանցը 0,5 կմ երկարությամբ: Նախատեսված է հնարավորինս սահմաններում լուսավորության ցանցը ավելացնել ևս 2 կմ երկարությամբ:
- Համայնքի վարչական տարածքում գտնվող այգեգործական տարածքում՝ Պտղնի-Գետամեջ տանող հատվածում 2016 թվականին կատարվել է մոտ 1,7 կմ երկարությամբ ասֆալտապատում: Ներհամայնքային ճանապարհների մոտ 10 կմ երկարությամբ ճանապարհները կարիք ունեն ընթացիկ և կապիտալ բարեկարգման: 2013-2016թթ. ընթացքում կատարվել են համայնքի դաշտամիջյան և ներհամայնքային ճանապարհների հարթեցման՝ փոսալցման և խճապատման աշխատանքներ:
- Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավվում է համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները: Բարեփոխումներ կատարելով՝ նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին՝

- Բնակիչներին ապահովվել աշխատատեղերով,
- զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը համայնքում,
- կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը աշխատանքից ազատ ժամերին,
- ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:

## 2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Համայնքի ֆինանսական իրավիճակը վերլուծելիս պետք է հստակ տարանջատել՝

- Համայնքի բյուջեն (եկամտային և ծախսային մասերով),
- Ծրագրերի իրականացման համար համայնքներին հասանելի այլ միջոցներ (աղբյուրներ և ծախսային ուղղություններ):

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով

եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2016թ.՝ 50,2%, 2017թ.՝ 50,2%, 2018թ.՝ 51,2%, 2019թ.՝ 51,2%, 2020թ. 52,2%, 2021թ. 52,3%) ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին (աղյուսակ 5):

Պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

**Աղյուսակ 5. Համայնքի 2015-2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը**

*(հազար դրամ)*

| Հ/հ | Մուտքերի անվանումը | 2015թ. | 2016թ. | 2017թ. | 2018թ. | 2019թ. | 2020թ. | 2021թ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փաստ. | փաստացի 01.10.2016 | կանխ. | կանխ. | կանխ. | կանխ. | կանխ. |
| | **ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*** | **23170.0** | **14819.8** | **23527.0** | **24007.9** | **24478.1** | **24957.6** | **25446.8** |
| I. | **ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*** | **18954.8** | **14819.8** | **23527.0** | **24007.9** | **24478.1** | **24957.6** | **25446.8** |
| 1 | **ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ** | **6868.9** | **5643.3** | **11223.3** | **11447.7** | **11676.7** | **11910.2** | **12148.4** |
| 1.1 | **Գույքային հարկեր անշարժ գույքից** | **4668.7** | **2964.0** | **4845.3** | **4942.2** | **5041.0** | **5141.8** | **5244.7** |
| | Գույքահարկ շենքերի և շինությունների համար | 0.8 | 1102.0 | 1546.3 | 1577.3 | 1608.7 | 1640.9 | 1673.8 |
| | Հողի հարկ | 3887.7 | 1862.0 | 3299.0 | 3364.9 | 3432.3 | 3500.9 | 3570.9 |
| 1.2 | **Գույքային հարկեր այլ գույքից** | **1820.1** | **2421.9** | **6568.0** | **6689.3** | **6813.1** | **6939.4** | **7068.1** |
| | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 1820.1 | 2421.9 | 6568.0 | 6689.3 | 6813.1 | 6939.4 | 7068.1 |
| 1.3 | **Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ** | **380.0** | **257.5** | **310.0** | **316.2** | **322.5** | **328.9** | **335.5** |
| | Տեղական տուրքեր | 380.0 | 257.5 | 310.0 | 316.2 | 322.5 | 328.9 | 335.5 |
| 1.4 | **Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ** | | | | | | | |
| | Պետական տուրքեր | | | | | | | |
| 1.5 | **Այլ հարկային եկամուտներ** | | | | | | | |
| | Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ. որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ | | | | | | | |
| 2 | **ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ** | **9829.8** | **7824.5** | **10432.7** | **10641.3** | **10854.1** | **11071.2** | **11292.6** |
| **2.1** | **Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| **2.2** | **Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| **2.3** | **Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ** | **9829.8** | **7824.5** | **10432.7** | **10641.3** | **10854.1** | **11071.2** | **11292.6** |
| ա) | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 9829.8 | **7824.5** | 10432.7 | 10641.3 | 10854.1 | 11071.2 | 11292.6 |
| բ) | Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ | | | | | | | |
| գ) | Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | | | | | | |
| դ) | ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | |
| **2.4** | **Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| ա) | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | | | | | | |
| բ) | ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | | |
| 3 | **ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*** | **2256.1** | **1352.0** | **1411.0** | **1439.2** | **1468.0** | **1497.3** | **1527.3** |
| 3.1 | **Տոկոսներ** | | | | | | | |
| 3.2 | **Շահաբաժիններ** | | | | | | | |
| 3.3 | **Գույքի վարձակալությունից եկամուտներ** | **1573.6** | **842.0** | **1361.0** | **1439.2** | **1468.0** | **1497.3** | **1527.3** |
| | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 1573.6 | 842.0 | 1361.0 | 1439.2 | 1468.0 | 1497.3 | 1527.3 |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | | | | | | | |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | | | | | | | |
| | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | | | | | | | |
| 3.4 | **Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից.** այդ թվում | | | | | | | |
| | Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | | | | | | | |
| 3.5 | **Վարչական գանձումներ** | | | | | | | |
| | Տեղական վճարներ | | | | | | | |
| | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի. շինությունների օրինականացման համար վճարներ | | | | | | | |
| | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ | | | | | | | |
| 3.6 | **Մուտքեր տույժերից. տուգանքներից** | **0.0** | **0.0** | **0.0** | **0.0** | **0.0** | **0.0** | **0.0** |
| | Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | | | | | | | |
| | Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից | | | | | | | |
| 3.7 | **Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| 3.8 | **Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | | |
| 3.9 | **Այլ եկամուտներ*** | **682.5** | **510.0** | **30.0** | **30.6** | **31.2** | **31.8** | **32.4** |
| | Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր | | | | | | | |
| | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | | | | | | | |
| | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | **682.5** | **510.0** | 30.0 | **30.6** | **31.2** | **31.8** | **32.4** |
| II. | **ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)** | | | | | | | |
| 1 | **Հիմնական միջոցների իրացումից մուտքեր** | | | | | | | |
| | Անշարժ գույքի իրացումից մուտքեր | | | | | | | |
| | Շարժական գույքի իրացումից մուտքեր | | | | | | | |
| | Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր | | | | | | | |
| 2 | **Պաշարների իրացումից մուտքեր** | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | **Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր** | | | | | | | |
| 4 | **Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր** | | | | | | | |
| | Հողի իրացումից մուտքեր | | | | | | | |
| | Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | | | | | | | |
| III. | **ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)** | | | | | | | |
| Ա. | **ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)** | | | | | | | |
| 1 | **ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ** | | | | | | | |
| 1.1 | **Արժեթղթեր** | | | | | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | | | | |
| | -հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 1.2 | **Վարկեր** | | | | | | | |
| | -վարկերի ստացում | | | | | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 1.3 | **Փոխատվություններ** | | | | | | | |
| | -բյուջետային փոխատվությունների ստացում | | | | | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | | | |
| 2 | **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ** | | | | | | | |
| 2.1 | **Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն** | | | | | | | |
| | -համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր | | | | | | | |
| | -իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր | | | | | | | |
| | -բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում | | | | | | | |
| 2.2 | **Փոխատվություններ** | | | | | | | |
| | -նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր | | | | | | | |
| | -փոխատվությունների տրամադրում | | | | | | | |
| 2.3 | **Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը** | 4215.2 | **2406.7** | **0.0** | **0.0** | **0.0** | **0.0** | **0.0** |
| 2.4 | **Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս** | | | | | | | |
| 2.5 | **Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս** | | | | | | | |
| 2.6 | **Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում** | | | | | | | |
| | **որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը** | | | | | | | |
| Բ. | **ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ** | | | | | | | |
| 1 | **ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ** | | | | | | | |
| 1.1 | **Արժեթղթեր** | | | | | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | | | | |
| | -հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 1.2 | **Վարկեր** | | | | | | | |
| | -վարկերի ստացում | | | | | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | | | |
| 1.3 | **Փոխատվություններ** | | | | | | | |
| | -փոխատվությունների | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ստացում | | | | | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | | | |

* Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

## Աղյուսակ 6. Համայնքի 2017-2021թթ. բյուջեն (եկամտների և ծախսերի կանխատեսումը)

*(հազար դրամ)*

| Եկամտի և ծախսի տեսակը | 2015թ. տարեկան պլան | 2017թ. կանխ. | 2015թ. փաստ.նկատ % | 2018թ. կանխ. | 2015թ. փաստ.նկատ % | 2019թ. կանխ. | 2015թ. փաստ.նկատ % | 2020թ. կանխ. | 2015թ. փաստ.նկատ % | 2021թ. կանխ. | 2015թ. փաստ.նկատ % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը եկամուտներ** | 18954.8 | 23527.0 | 98.0 | 23997.6 | 100 | 24477.5 | 102 | 24967.1 | 104 | 25466 | 106 |
| Հարկային եկամուտներ, որից | 6488.8 | 6618.6 | 98.0 | 6750.9 | 100 | 6886.0 | 102 | 7023.7 | 104 | 7164 | 106 |
| Հողի հարկ | 3877.6 | 3955.2 | 98.0 | 4034.3 | 100 | 4114.9 | 102 | 4197.2 | 104 | 4281 | 106 |
| Գույքահարկ | 2611.2 | 6854.5 | 98.0 | 6991.6 | 100 | 7131.4 | 102 | 7274.1 | 104 | 7420 | 106 |
| Տեղական տուրքեր | 380.0 | 387.6 | 98.0 | 395.4 | 100 | 403.3 | 102 | 411.3 | 104 | 420 | 106 |
| Պաշտոնական ընթացիկ դրամաշնորհներ | 9829.8 | 10026.4 | 98.0 | 10226.9 | 100 | 10431.5 | 102 | 10640.1 | 104 | 10853 | 106 |
| Այլ եկամուտներ | 2256.2 | 2301.3 | 98.0 | 2347.4 | 100 | 2394.3 | 102 | 2442.2 | 104 | 2491 | 106 |
| Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր | | 0.0 | | 0.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 0 | 0 | 0 |
| Տարեսկզբի ազատ մնացորդ | 4215.2 | 4299.5 | 98.0 | 4385.5 | 100 | 4473.2 | 102 | 4562.7 | 104 | 4654 | 106 |
| **Ընդամենը** | **23170.0** | 23633.4 | 98.0 | 24106.1 | 100 | 24588.2 | 102 | 25080.0 | 104 | 25582 | 106 |
| **Ընդամենը ծախսեր** | 20763.2 | 23527.0 | 98.0 | 23997.6 | 100 | 24477.5 | 102 | 24967.1 | 104 | 25466 | 106 |
| Ընթացիկ ծախսեր, այդ թվում՝ | 18954.7 | 21685.4 | 98.0 | 22119.1 | 100 | 22561.5 | 102 | 23012.7 | 104 | 23473 | 106 |
| Տեղ. ինքնակառ. մարմնի, դրանց ենթ-հիմն. աշխատ. աշխատավարձ | 16761.8 | 19220.9 | 98.0 | 19605.3 | 100 | 19997.4 | 102 | 20397.4 | 104 | 20805 | 106 |
| Ապրանքն. գնման և ծառ. վճ. ծախս | 2135.9 | 2260.5 | 98.0 | 2305.7 | 100 | 2351.8 | 102 | 2398.9 | 104 | 2447 | 106 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սուբսիդիաներ | 0.0 | 0.0 | | 0.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 0 | 0 | 0 |
| Դրամա-շնորհներ | 0.0 | 0.0 | | 0.0 | 0 | 0.0 | 0 | 0.0 | 0 | 0 | 0 |
| Սոցիալական նպաստներ | 60.0 | 204.0 | 98.0 | 208.1 | 100 | 212.2 | 102 | 216.5 | 104 | 221 | 106 |
| Այլ ծախսեր | 1805.5 | 1841.6 | 98.0 | 1878.4 | 100 | 1916.0 | 102 | 1954.3 | 104 | 1993 | 106 |
| Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, այդ թվում | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Հիմնական միջոցներ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |

## 2.7 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի զարգացման առկա դժվարություններն ըստ ուղղությունների ներկայացված են ստորև.

1. Համայնքում կոյուղու ցանցի բացակայում, որը խիստ անհրաժեշտ է կառուցել,
2. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպում՝ երիտասարդության ներգրավմամբ,
3. Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը նպաստող, սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարության իրականացում, հանգստի գոտիների ստեղծում:

Վերը նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտներից:

## 2.8 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻ (ՈւԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- ✓ Զարգացման համար համայնքն ունի բավարար մասնագիտական ներուժ, ավելի քան 198 ԲՈՒՀ-երի շրջանավարտներ, տարբեր մասնագիտություններով, որոնք կարողանում են օգնել համայնքի կրթության ու դաստիարակության մշակույթին, շինարարական աշխատանքներին:
- ✓ Համայնքն ամբողջությամբ գազաֆիկացված է.
- ✓ Համայնքը զերծ է արտադրական թափոններից և մթնոլորտի աղտոտվածությունից:
- ✓ Գետամեջ համայնքում արևային օրերը շատ են, ինչը բարենպաստ է ջերմոցային տնտեսությունների հիմնման և արևային մարտկոցների տեղադրման, որի հետևանքով կարտադրվի էլեկտրաէներգիա և կստեղծվեն նոր աշխատատեղեր:
- ✓ Երևան և Աբովյան քաղաքների հետ կապի առկայություն (համայնքը մոտ է գտնվում մայրաքաղաքին՝ մոտ 15 կմ., իսկ Աբովյան քաղաքին՝ մոտ 4 կմ.), որը նպաստում է շուկաներում գյուղատնտեսական մթերքների սպառմանը,
- ✓ Խմելու ջրագծերի (Արզնի-Երևան և Արզական-Երևան) առկայություն.

- ✓ Ոռոգման ներհամայնքային համակարգի առկայություն.
- ✓ Համայնքի տարածքով հոսող Հրազդան գետի առկայությունը (հանգստյան գոտիների ստեղծում, ձկնաբուծության զարգացում):

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
- ✓ Համայնքի թույլ կողմերն են՝
- ✓ Գործազրկության առկայությունը և արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճը,
- ✓ Աշխատատեղերի պակասը,
- ✓ Ներհամայնքային ճանապարհների ոչ բարեկարգ վիճակը,
- ✓ Բնակլիմայական պայմանները՝ ձմռան ամիսների ցրտաշունչ եղանակը, որը ազդում է համայնքի բնակիչների եկամուտների վրա (գազի և էլեկտրաէներգիայի մեծ ծախս),
- ✓ Հողերի անջրդիության պատճառով համայնքի բնակչի եկամուտների նվազումը,
- ✓ Ձնհալի ժամանակ Հրազդան գետի վարարումների վտանգի առկայությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝
- ✓ Մեծ քանակի և որակի աշխատուժի առկայությունը:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝
- Բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները (երկրաշարժ, հեղեղումներ, սողանքների առաջացում),
- Գործազրկության մակարդակի աճը,
- Համայնքի որոշակի տարածքում սահող հողերի առկայությունը, որի հետևանքով փլուզված են որոշ այգետնակներ:

# 3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

## 3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Գետամեջ համայնքի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություններ:

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և ամենաբարեկեցիկ բնակավայրերից մեկը: Բարեփոխումներ կատարելով՝ նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին՝
- զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը համայնքում,
- կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը աշխատանքից ազատ ժամերին,
- ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:
Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- ✓ Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- ✓ Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճը, արտահայտված տոկոսով,
- ✓ Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

Ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 7-ում:

**Աղյուսակ 7. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)**

| Հ/Հ | Ցուցանիշները | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով) | **15%** | **14%** | **12%** | **11%** | **10%** |
| 2. | Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով | **1,5%** | **1,8%** | **1,9%** | **2%** | **2,3%** |
| 3. | Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով | **0,5%** | **0,7%** | **1%** | **1,5%** | **2%** |

### *3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ*

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

- ✓ Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում և ասֆալտապատում,
- ✓ Համայնքի փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում,
- ✓ Համայնքի մշակույթի տան վերանորոգում և գույքի ձեռք բերում: Համայնքը դարձնել ավելի հետաքրքիր, հրապուրիչ և հարմարավետ բնակիչների համար՝ ավելի ակտիվացնելով համայնքի մշակութային կյանքը,
- ✓ Համայնքի գրադարանի վերանորոգում և գույքի ձեռք բերում,
- ✓ Համայնքի գերեզմանատան տարածքի ընդլայնում և ցանկապատում:

**Աղյուսակ 8. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների և հիմնական նպատակների կանխատեսվող արժեքներ (2017-2021թթ.)**

| Տրամաբանական մոդելի բաղադրիչ | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
|---|---|---|---|---|---|
| ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ | | | | | |
| 1.Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով) | 15% | 14% | 12% | 11% | 10% |
| 2. Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով | 1,5% | 1,8% | 1,9% | 2% | 2,3% |
| 3. Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով | 0,5% | 0,7% | 1% | 1,5% | 2% |
| ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ | | | | | |
| 1. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, ասֆալտապատում | 5 մլն. դրամ | 5,5 մլն. դրամ | 6 մլն. դրամ | 6,5 մլն. դրամ | 7 մլն. դրամ |
| 2. Համայնքի փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում | 200 հազար դրամ | 200 հազար դրամ | 300 հազար դրամ | 300 հազար դրամ | 400 հազար դրամ |
| 3. Համայնքի մշակույթի տան վերանորոգում և գույքի ձեռք բերում | 3 մլն. դրամ | 3,5 մլն. դրամ | 4 մլն. դրամ | 4,5 մլն. դրամ | 5 մլն. դրամ |
| 4. Համայնքի գրադարանի վերանորոգում և գույքի ձեռք բերում | 2 մլն. դրամ | 2,5 մլն. դրամ | 3 մլն. դրամ | 3,5 մլն. դրամ | 4 մլն. դրամ |

Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը ներկայացված են ծրագրի անձնագրերում:

## Ծ Ր Ա Գ Ր Ի  Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր  N 1

«Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, ասֆալտապատում»
(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | միջոցներ հայթայթել ներհամայնքային փողոցների բարեկարգման և ասֆալտապատման համար: | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ՝ Ունենալ բարեկարգ, անվտանգ և մաքուր փողոցներ | | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 0 դրամ | 5 մլն. | 5,5 մլն. | 6 մլն. | 6,5 մլն. | 7 մլն. |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | ***1. Ասֆալտապատ ճանապարհից օգտվող բնակչության թիվը*** | | | | | | |
| Ապահովել բնակչությանը անվտանգ փողոցներով, որից կօգտվի համայնքի բնակչությունը: | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 300 | 350 | 400 | 500 | 600 | 650 |
| | | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | | | | | |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1. Համայնքի դրամական միջոցների հավաքագրում,<br>2. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպությունների փնտրում,<br>3. Մրցույթի հայտարարություն,<br>4. Պայմանագրի կնքում,<br>5. Աշխատանքների կատարում: | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 0 դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 30 մլն. դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 30 մլն. դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Դոնոր կազմակերպություններ | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Տարերային աղետներ | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակիչներ | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017-2021թթ. | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Ներհամայնքային ճանապարհների բարեկարգումը կնպաստի համայնքի բնակիչների ավտոմեքենաների անվտանգ երթևեկությանը: | | | | | | |

# Ծ Ր Ա Գ Ր Ի   Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր   N 2

«Համայնքի փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում»
(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | միջոցներ հայթայթել փողոցային լուսավորության աշխատանքների իրականացման համար: | | | | | | |
| <u>Ծրագրի անմիջական նպատակ՝</u> Ունենալ արտաքին լուսավորությունով ապահովված, անվտանգ և մաքուր փողոցներ | | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 0 դրամ | 200 հազար | 200 հազար | 300 հազար | 300 հազար | 400 հազար |
| <u>Ծրագրի միջանկյալ արդյունքներ</u> | ***1. Լուսավորությունից օգտվող բնակչության թիվը*** | | | | | | |
| Ապահովել բնակչությանը լուսավոր փողոցներով, որից կօգտվի համայնքի բնակչությունը: | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 250 | 310 | 480 | 540 | 670 | 720 |
| | | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | | | | | |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1. Համայնքի դրամական միջոցների հավաքագրում,<br>2. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպությունների փնտրում,<br>3. Մրցույթի հայտարարություն,<br>4. Պայմանագրի կնքում,<br>5. Աշխատանքների կատարում: | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 0 դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 1,4 մլն. դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 1,4 մլն. դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Դոնոր կազմակերպություններ | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Տարերային աղետներ | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակիչներ | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017-2021թթ. | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Ներհամայնքային ճանապարհների բարեկարգումը և լուսավորության ցանցի ընդլայնումը կնպաստի համայնքի բնակիչների ավտոմեքենաների անվտանգ երթևեկությանը, ինչպես նաև համայնքի բոլոր բնակելի թաղամասերում փողոցային լուսավորության աշխատանքների իրականացում: | | | | | | |

# Ծ Ր Ա Գ Ր Ի   Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր   N 3

«Համայնքի մշակույթի տան վերանորոգում և գույքի ձեռք բերում»
(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Ներգրավել ներդրողների համայնքի մշակույթի տունը վերանորոգելու, համապատասխան գույքով և մասնագիտական սարքավորումներով ապահովելու համար</td></tr>
<tr><td rowspan="4"><u>Ծրագրի անմիջական նպատակ</u><br><br>Երեխաների կրթական մակարդակի բարձրացում</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0 դրամ</td><td>3 մլն.</td><td>3,5 մլն.</td><td>4 մլն.</td><td>4,5 մլն.</td><td>5 մլն.</td></tr>
<tr><td rowspan="8"><u>Ծրագրի միջանկյալ արդյունքներ</u><br><br>Երեխաներին մասնագիտական կողմնորոշման համար առավել իրատեսական պայմանների ստեղծում</td><td colspan="7">1. Համայնքի մշակույթի տանը տարբեր խմբակների բացում և աշխատատեղերի ստեղծում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>1</td><td>1</td><td>2</td><td>2</td><td>2</td></tr>
<tr><td colspan="7">2. Երեխաների ներգրավում խմբակներում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>10</td><td>15</td><td>20</td><td>30</td><td>40</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1. Համայնքի դրամական միջոցների հավաքագրում,<br>2. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպությունների փնտրում,<br>3. Մրցույթի հայտարարություն,<br>4. Պայմանագրի կնքում,<br>5. Աշխատանքների կատարում:</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 0 դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 20 մլն.<br>Ընդհանուր բյուջեն՝ 20 մլն.</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Դոնոր կազմակերպություններ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Տարերային աղետներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Գետամեջ համայնքի մշակույթի տունը կարիք ունի վերանորոգման, համապատասխան գույքի ձեռքբերման և ջեռուցման:</td></tr>
</table>

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N4

«Համայնքի գրադարանի վերանորոգում և գույքի ձեռք բերում»
(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Ներգրավել ներդրողների՝ համայնքի գրադարանին համապատասխան գույքով և մասնագիտական սարքավորումներով ապահովելու համար</td></tr>
<tr><td rowspan="4"><u>Ծրագրի անմիջական նպատակ</u><br><br>Համայնքի բնակչության կրթական մակարդակի բարձրացում</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0 դրամ</td><td>2 մլն.</td><td>2,5 մլն.</td><td>3 մլն.</td><td>3,5 մլն.</td><td>4 մլն.</td></tr>
<tr><td rowspan="9"><u>Ծրագրի միջանկյալ արդյունքներ</u><br><br>Երեխաների մասնագիտական գիտելիքների կողմնորոշման և ուսանողների մասնագիտական գիտելիքների զարգացման համար առավել իրատեսական պայմանների ստեղծում</td><td colspan="7">1. Համայնքի գրադարանում ընթերցողների համար նպաստավոր պայմանների ստեղծում և համապատասխան գույքով համալրված ընթերցասրահի պարագայում ակնկալվող ընթերցողների թվի աճ</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>146</td><td>192</td><td>215</td><td>284</td><td>320</td><td>480</td></tr>
<tr><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1. Համայնքի դրամական միջոցների հավաքագրում,<br>2. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպությունների փնտրում,<br>3. Մրցույթի հայտարարություն,<br>4. Պայմանագրի կնքում,<br>5. Աշխատանքների կատարում:</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 0 դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 15 մլն.<br>Ընդհանուր բյուջեն՝ 15 մլն.</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Դոնոր կազմակերպություններ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Տարերային աղետներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Գետամեջ համայնքի գրադարանը ունի վերանորոքման և համապատասխան գույքով համալրման կարիք: Համայնքի գրադարանում ընթերցողների համար նպաստավոր պայմանների և համապատասխան գույքով համալրված ընթերցասրահի ստեղծումը խթան կհանդիսանա ընթերցողների թվի աճին և համայնքի բնակիչների մասնագիտական գիտելիքների զարգացմանը:</td></tr>
</table>

# 4. ՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային և բնակավայրային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀԶԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

Գետամեջ համայնքի ՀԶԾ-ի ֆինանսավորումն ամփոփված է աղյուսակ 9-ում:

**Աղյուսակ 9. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**(Գետամեջ համայնք)**

**(2017-2021թթ.)**

| Պարտադիր խնդիր | Բյուջետա-վորված միջոցներ | Ծրագրի կատարումն ըստ տարիների | | | | | Ֆինանսավորման աղբյուրներ | | | | | | Ծախսերի դասեր | | Ֆինանսավորման կարգավիճակ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | Համայնքի սեփական եկամուտներ | Ներքին պաշտոնական դրամաշնորհներ | Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | Բարեգործություն/նվիրատվություն | Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն | Այլ աղբյուրներ | Ընթացիկ ծախսեր | Կապիտալ ծախսեր | Ֆինանսավորումն առկա է | Ֆինանսավորման շուրջ ընթանում են բանակցություններ | Ներկայացվել է ֆինանսավորման հայտ | Ֆինանսավորման աղբյուր հայտնաբերված չէ |
| 1. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում ասֆալտապատում և փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում | 0 դրամ | 5 մլն դրամ | 5,5 մլն դրամ | 6 մլն դրամ | 6,5 մլն դրամ | 7 մլն դրամ | 13 մլն դրամ | | | | | 17 մլն դրամ | | 30 մլն դրամ | 13 մլն դրամ | | | 17 մլն դրամ |

| | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2. Համայնքի փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում | 0 դրամ | 200 հազար դրամ | 200 հազար դրամ | 300 հազար դրամ | 300 հազար դրամ | 400 հազար դրամ | 1,4 մլն դրամ | | | | | | | 1,4 մլն դրամ | | | | 1,4 մլն դրամ |
| 3.Համայնքի մշակույթի տան վերանորոգում և գույքի ձեռք բերում | 0 դրամ | 3 մլն դրամ | 3,5 մլն դրամ | 4 մլն դրամ | 4,5 մլն դրամ | 5 մլն դրամ | | | | | | 20 մլն դրամ | | | | | | 20 մլն դրամ |
| 4. Համայնքի գրադարանի վերանորոգում և գույքի ձեռք բերում | 0 դրամ | 2 մլն դրամ | 2,5 մլն դրամ | 3 մլն դրամ | 3,5 մլն դրամ | 4 մլն դրամ | | | | | | 15 մլն դրամ | | | | | | 15 մլն դրամ |

## 5. ՀԶԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀԶԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

ՀԶԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

**Աղյուսակ 10-*ում*** ներկայացված է ՀԶԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

### Աղյուսակ 10. Մ Ո Ն Ի Թ Ո Ր Ի Ն Գ Ի  Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

**ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔ**
**(2017-2021 թվականներ)**

| Տրամաբանական մոդելի բաղադրիչ | Ցուցանիշի փաստացի արժեք (2016) | Ցուցանիշի թիրախային արժեք (2017) | Ցուցանիշի փաստացի արժեք (2017) | Ցուցանիշի կատարողական (2017) | Ցուցանիշի թիրախային արժեք (2018) | Ցուցանիշի փաստացի արժեք (2018) | Ցուցանիշի կատարողական (2018) | Ցուցանիշի թիրախային արժեք (2019) | Ցուցանիշի փաստացի արժեք (2019) | Ցուցանիշի կատարողական (2019) | Ցուցանիշի թիրախային արժեք (2020) | Ցուցանիշի փաստացի արժեք (2020) | Ցուցանիշի կատարողական (2020) | Ցուցանիշի թիրախային արժեք (2021) | Ցուցանիշի փաստացի արժեք (2021) | Ցուցանիշի կատարողական (2021) | Տվյալների հավաքագրման պարբերականությունը | | Ցուցանիշի ստուգման աղբյուր | Ցուցանիշի ստուգման մեթոդ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | | | | Կիսամյակային | Տարեկան | | |
| **ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ** | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| **1.Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)** | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքա-պետարան | Փաստա-թղթային ուսումնա-սիրություն |
| **2.Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, (արտահայտված տոկոսով)** | | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքա-պետարան | Փաստա-թղթային ուսումնա-սիրություն |

| | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **3.Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով** | | | | | | | | | | | | | | | | | X | Համայնքա-պետարան | Փաստա-թղթային ուսումնա-սիրություն |
| **ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ** | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում ասֆալտապատում և փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում | 0 | | 5 մլն | | 5,5 մլն | | | 6 մլն | | | 6,5 մլն | | | 7 մլն | | | | X | Համայնքա-պետարան | Փաստա-թղթային ուսումնա-սիրություն |
| 2. Համայնքի փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում | 0 | 200 հազար | | | 200 հազար | | | 300 հազար | | | 300 հազար | | | 400 հազար | | | | X | Համայնքա-պետարան | Փաստա-թղթային ուսումնա-սիրություն |
| 3.Համայնքի մշակույթի տան վերանորոգում և գույքի ձեռք բերում | 0 | 3 մլն | | | 3.5 մլն | | | 4 մլն | | | 4.5 մլն | | | 5 մլն | | | | X | Համայնքա-պետարան | Փաստա-թղթային ուսումնա-սիրություն |
| 4.Համայնքի գրադարանի վերանորոգում և գույքի ձեռք բերում | 0 | 2 մլն | | | 2.5 մլն | | | 3 մլն | | | 3.5 մլն | | | 4 մլն | | | | | Համայնքա-պետարան | Փաստա-թղթային ուսումնա-սիրություն |

# ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

ՀԶԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը: 2017-2021 թթ. ընթացքում ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինանսական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: ՀԶԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքը նրա յուրաքանչյուր բնակիչ: ՀԶԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար ՏԻՄ-երը պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀԶԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀԶԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

Հիմնվելով ՀԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալիր և (կամ) համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀԶԾ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀԶԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 դեկտեմբերի 2016 թվականի N 48-Ա

## 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սահմանել 2017 թվականի բյուջետային տարվա համար համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման հետևյալ կարգը՝

1) հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, ինչպես նաև զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման նպատակով՝

ա. մինչև 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի տրամադրումը վերապահել համայնքի ղեկավարին.

բ. 30 000 (երեսուն հազար) դրամ գումարից ավելի ծախսի դեպքում հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում.

2) համայնքում պաշտպանության կազմակերպման, քաղաքաշինության և կոմունալ տնտեսության, հողօգտագործման, տրանսպորտի, կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, աշխատանքի և սոցիալական ծառայության, գյուղատնտեսության

բնագավառներում կամավոր լիազորություններն իրականացնել 2017 թվականի բյուջեով նախատեսված ծախսերի հաշվին՝

ա. մինչև 1 000 000 (մեկ միլիոն) դրամ ծախս պահանջող աշխատանքների իրականացումը վերապահել համայնքի ղեկավարին.

բ. 1 000 000 (մեկ միլիոն) դրամից ավել ծախսի դեպքում հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՆԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 դեկտեմբերի 2016 թվականի N 49-Ն

## 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափերը՝ համաձայն N1 և N2 հավելվածների:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՏՈՒՇ
3. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՆԱՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված N 1
Գետամեջ համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 19-ի
N 49-Ն որոշման

## *Տեղական տուրքեր*

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7 500 դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15 000 դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 դրամ.

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 դրամ.

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ:

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1 500 դրամ.

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2 500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1 500 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ 2 500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5 000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5 000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7 000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 0000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20 000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50 000 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5 000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5 000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7 000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10 000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20 000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50 000 դրամ:

5. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության յուրաքանչյուր օրվա համար 50 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության ընթացիկ տարվա համար՝ 200 000 դրամ.

3) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության ընթացիկ տարվա համար՝ 30 000 դրամ.

4) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության յուրաքանչյուր տարվա համար՝ 50 000 դրամ.

6. Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

1) հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2 000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3 000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5 000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7 000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10 000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20 000 դրամ,

2) ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1 000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2 000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4 000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7 000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10 000 դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 30 000 դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 60 000 դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 250 000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 300 000 դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ.

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1 000 դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2 500 դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 700 դրամ.

4) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց տեղական տուրքը սահմանել՝ 175 դրամ:

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 1 000 դրամ.

11. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ գյուղական համայնքի անվանումը ֆիրմային անվանում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանել՝ 50 000դրամ.

12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 5 000 դրամ.

13. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 50 000 դրամ.

14. Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր տարվա համար սահմանել ՝

1) 3 հեկտարից մինչև 5 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2 500 000 Հայաստանի Հանրապետության դրամ.

2) 5 հեկտարից մինչև 7 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ.

3) 7 հեկտարից մինչև 10 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ.

4) 10 հեկտարից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ:

Հավելված N 2
Գետամեջ համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 19-ի
N 49-Ն որոշման

***Տեղական վճարներ***

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 10 000 դրամ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝

1) մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հողամասերի համար՝ յուրաքանչյուր քառակուսի մետր մակերեսի համար՝ 20 դրամ.

